ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 սեպտեմբերի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

115
(3324)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽԻՍՏ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի՝ իշխանությանը մոտ կանգնած աղբյուրների փոխանցմամբ, առաջիկա ՏԻՄ ընտրություններին ընդառաջ, իշխանությունը խիստ վերահսկողություն է սահմանել այն մարզերում, որտեղ համայնքապետերի ընտրություններ են սպասվում: Մեր տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը իրավապահ եւ վերահսկող մարմիններին հանձնարարել է առավել ակտիվ աշխատել մարզերում՝ ուշադրության կենտրոնում պահելով ինչպես տեղական իշխանությունների ու սեփական թիմի ներսում կատարվող գործընթացները, այնպես էլ ընդդիմադիր շրջանակների գործունեությունը:

Հատկապես խոշորացույցի տակ են ընդդիմության ներկայացուցիչների հանդիպումները, կապերն ու հնարավոր պայմանավորվածությունները: Ուսումնասիրվում են նաեւ ընտրական գործընթացներին առնչվող հնարավոր գործարքները, այդ թվում՝ ձայների բաժանման կամ քաղաքական ուժերի միջեւ պայմանավորվածությունների վերաբերյալ տեղեկությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները նշում են, որ Նիկոլ Փաշինյանը հատկապես խիստ է դրել հոկտեմբերի 25-ին սպասվող ՏԻՄ ընտրությունների հարցը: Իշխանության ներսում դրանք դիտարկվում են որպես կարեւոր քաղաքական փորձություն, եւ վարչապետը ցանկանում է բացառել իր համար անցանկալի զարգացումները:

Չի բացառվում, որ առաջիկա շաբաթներին մարզերում իրավապահների գործողությունները կտրուկ ակտիվանան, իսկ որոշ դեպքերում հանգեցնեն նաեւ ձերբակալությունների: Թե որ մարզերում եւ ում շուրջ կարող են զարգացումներ լինել, մեր աղբյուրներն առայժմ չեն մանրամասնում:

ՀՀ առողջապահության համակարգում շարունակում է թեժ քննարկվել առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանի պաշտոնավարման եւ գործունեության հարցը: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ Նանուշյանը վերանշանակումից հետո հիմնականում համակարգում է նախարարության միջազգային ուղղությունը, եւ արդեն համակարգի ներսում դժգոհություն կա, որ նրա գործունեությունը վերջին շրջանում առավելապես ընդգծվում է արտերկրյա գործուղումներով: Ավելին՝ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ երբ Նանուշյանն անձամբ չի մեկնում գործուղումների, արտերկիր են մեկնում նրա թիմի անդամները: Արդյունքում, առողջապահության համակարգում արդեն դժգոհությամբ կատակում են, թե փոխնախարարի թիմը վերածվել է միջազգային գործուղումների մշտական «ներկայացուցչության»: Կարճ ասած, նախարարությունում մեդիայի միջոցով դժգոհում են, թե իրենք գործուղումների չեն գնում, այլ խումբ է գնում: Իսկ թե նախարարությունում ով պիտի զբաղվի առողջապահական հարցերով, մնում է անհասկանալի:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իրավապահ համակարգում որոշում է կայացվել նախկին բարձրաստիճան պաշտոնյաների մոտ գտնվող բոլոր զենքերը հնարավորինս հավաքել: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ խոսքը նաեւ օրինական հիմքով ձեռք բերված եւ հաշվառված զենքերի մասին է: Ներքին գործերի նախարարությունը նախկին պաշտոնյաների դեմ դատական հայցեր է ներկայացնում՝ պահանջելով անգամ նվիրատվությամբ, պարգեւատրման միջոցով, անգամ գնման եղանակով ստացած զենքերը հանձնել պետությանը: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները գործընթացը կապում են վերջին շրջանում նախկին պաշտոնյաների նկատմամբ ակտիվացած իրավապահ գործողությունների հետ: Իրավապահ համակարգում, ըստ մեր տեղեկությունների, մտավախություն կա, որ նախկիններ գույքի, ունեցվածքի նկատմամբ գործընթացները, որոնք քաղաքական շրջանակներում արդեն որակվում են որպես «կուլակաթափություն», քաղաքական հայացքներով պայմանավորված, կարող են անձնական հաշվեհարդարների կամ վենդետայի վտանգ առաջացնել: Հենց այս ռիսկը նվազեցնելու նպատակով էլ փորձ է արվում հնարավորինս սահմանափակել նախկին պաշտոնյաների մոտ զենքի առկայությունը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել մարզերի համայնքապետերի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի վերաբերյալ հայտարարագրերը եւ դրանք ներկայացնել հանրությանը: Այս անգամ ուսումնասիրել ենք Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի հայտարարագրերը: Փարամազյանը 2016 թվականի նոյեմբերի 13-ից մինչեւ 2017 թվականի նոյեմբերի 13-ն աշխատել է Քաջարան քաղաքային համայնքի ղեկավար: 2017 թվականին ընտրվել, 2022-ին վերընտրվել է: Նրա 2021 թվականի հայտարարագրում որպես եկամուտ նշված է 26 մլն 492 հազար 863 դրամ: Դրանից 24 մլն դրամը Փարամազյանը ստացել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից՝ վարձակալության դիմաց, իսկ 2 մլն 492 հազար 863 դրամը՝ Քաջարանի համայնքապետարանից որպես աշխատանքի վարձատրություն: 2021 թվականին նրա անունով եղել են երկու անշարժ գույք՝ Քաջարանում գտնվող հասարակական նշանակության շինություն եւ բնակարան: Շինությունը ձեռք էր բերվել 2011 թվականին՝ գնման, իսկ բնակարանը՝ 2019 թվականին՝ նվիրատվության եղանակով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՆԱԽ ՊԵՏՔ Է ԼՈՒԾՈՒՄԸ ՏԱՍ»

Երեւանի ավագանու նիստին իրավիճակը լարվեց: ArmLur.am-ն այս մասին զրուցեց Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Պեդրո Զարոկյանի հետ:

- Քաղաքապետ Տիգրան Ավինյանը Ձեզ ամբարտավան եւ անպարկեշտ անվանեց: Կխնդրեմ՝ նշեք, թե ինչից հետո տեղի ունեցավ դա:

- Ես չգիտեմ՝ ինչից նեղացավ: Ես խոսեցի իրենց անգրագիտության մասին՝ խցանումների հարցով, եւ բարձրացրեցի նաեւ կոռուպցիայի հետ կապված հարց: Մասնավորապես, խոսեցի երթեւեկության կազմակերպման կենտրոնի մասին, որի համար ամսական 41 միլիոն դրամ է հատկացվում: Ես երեք տարի է՝ ասում եմ՝ եթե երթեւեկության եւ խցանումների հարցով մասնագետներ եք փնտրում, բերեք մասնագետների:

- Քաղաքապետը, սակայն, Ձեզ անպարկեշտ անվանեց:

- Այո՛: Ես չեմ հասկանում՝ ինչո՞ւ է նեղվում: Ես ընդամենը ասում եմ՝ ձեր աշխատանքի մեջ կա անգրագիտություն: Եթե ոստիկանները երթեւեկության ամենածանր հատվածներում մեքենաների համար ճանապարհ են փակում, կանգնում են եւ զրույց են տալիս, իսկ դրա հետեւանքով խցանում է առաջանում, սա ի՞նչ է, եթե ոչ սխալ կազմակերպում: Նույն հարցը երեք տարի է բարձրացնում եմ:

- Ի՞նչ առաջարկներ ունեք խցանումների խնդիրը լուծելու համար:

- Առաջին հերթին պետք է տվյալների վրա հիմնված լուծումներ լինեն: Իրենք ասում են՝ կենտրոնը վեց ամիս է աշխատում եւ տվյալներ է հավաքում: Բայց ես մի տվյալ ասեմ. 2026 թվականին ոստիկանությունը 17 հազար տուգանք է արձանագրել երկրորդ գծում կայանելու համար: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ են մեքենաները երկրորդ գծում կանգնում եւ խցանում առաջացնում: Մենք երեք տարի առաջ ասում էինք՝ ձեր կարմիր գծերը, որ ներկում եք գետնի վրա, բերեք ժամանակավոր կանգառների տեղեր: Օրինակ՝ մարդը պետք է առաքում կատարի, տաքսի է, ուղեւոր է իջեցնում: Դրա համար պետք է լինի հինգ րոպեով կանգնելու հնարավորություն, որպեսզի մեքենան երկրորդ գիծ չփակի եւ խցանում չստեղծի: Սա շատ երկրներում լուծված հարց է: Իսկ մեզ մոտ ուղղակի կարմիր գիծ են ներկում եւ դրանով հարցը համարում են լուծված: Այսօր կենտրոնում տեսնում ենք մեքենաներ, որոնք երկար ժամանակ կանգնում են, մարդիկ չեն կարողանում ուղեւոր իջեցնել, առաքիչները երկրորդ գիծ են փակում: Բա սա անգրագիտություն չէ՞:

- Քաղաքում նաեւ քննարկվում է միջքաղաքային տաքսիների մուտքը կենտրոն սահմանափակելու հարցը: Ինչպե՞ս եք գնահատում այդ մոտեցումը:

- Եթե ուզում եք արգելել միջքաղաքային տաքսիների մուտքը կենտրոն, պետք է նախ լուծում առաջարկեք: Մարդիկ որտեղի՞ց են գալիս, որտե՞ղ պետք է իջնեն: Չի կարելի մարդուն ասել՝ քաղաքի կենտրոնի սահմանին իջիր, կես ժամ կամ մեկ ժամ սպասիր, հետո ուրիշ մեքենայով գնա: Դու պետք է նախ կանգառներ նախատեսես, մարդկանց իջնելու հնարավորություն տաս, երթուղիներ կազմակերպես: Լուծումը պետք է նախ տաս, հետո արգելք սահմանես: Հակառակ դեպքում դա անմարդկային մոտեցում է:

- Իսկ եթե կենտրոնը փակվի այլ ավտոմեքենաների համար, ի՞նչ ազդեցություն կունենա դա քաղաքի երթեւեկության վրա:

- Եթե ամեն ինչ փակեն, բայց խնդրի իրական պատճառները չլուծեն, իրավիճակը չի բարելավվի: Իրենք անընդհատ ասում են, որ ամեն ինչ հասկանում են, բայց պարզ հարցերը չեն կարողանում լուծել: Եթե մարդիկ ամեն օր մեկ-երկու ժամ խցանումների մեջ են, նշանակում է՝ կան խնդիրներ, որոնք պետք է լուծվեն: Վեց ամիս է՝ այդ երթեւեկության կարգավորման կենտրոնն աշխատում է: Ժողովուրդը ի՞նչ արդյունք է տեսել: Խցանումները պակասե՞լ են: Ընդհակառակը՝ բազմաթիվ հատվածներում իրավիճակը շարունակում է ծանր մնալ:

- Դուք նաեւ անդրադարձաք փողոցների վերանորոգման աշխատանքներին:

- Այո՛: Խցանումներն ավելանում են նաեւ այն պատճառով, որ փողոցները քանդում են, հետո նորից սարքում, հետո կրկին քանդում: Շատ երկրներում նման աշխատանքները փորձում են իրականացնել գիշերային ժամերին, որպեսզի մարդկանց երթեւեկությանը հնարավորինս քիչ խանգարեն: Մեզ մոտ փոսը քանդում են եւ մեկ-երկու շաբաթ այդ հատվածը մնում է այդ վիճակում: Եթե աշխատանք պետք է իրականացվի, արեք այն ժամանակին եւ հնարավորինս արագ: Մի քանի օրով ճանապարհ փակելը հասկանալի է, բայց շաբաթներով նույն հատվածը փակ պահելն արդեն խնդիր է: Այս անգործության հետեւանքով իրենք իրենք են խցանումներ ստեղծում:

- Վերջում՝ ի՞նչն է, ըստ Ձեզ, այսօր Երեւանի խցանումների հիմնական պատճառը:

- Հիմնական խնդիրը ոչ միայն մեքենաների քանակն է, այլեւ երթեւեկության սխալ կազմակերպումը: Չի կարելի այդ գումարները ծախսել, մարդկանց պաշտոնների նշանակել, իսկ հետո ասել՝ վեց ամիս է՝ տվյալներ ենք հավաքում: Երեք տարի է՝ խոսում ենք այս խնդիրների մասին: Առաջինը պետք է լուծել ամենապարզ հարցերը՝ կանգառների կազմակերպումը, երկրորդ գծում կայանումը, ճանապարհների վերանորոգման աշխատանքների ճիշտ ժամկետավորումը եւ երթեւեկության արդյունավետ կառավարումը: Հետո նոր կարելի է խոսել ավելի մեծ սահմանափակումների մասին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

17,8 ՄԼՆ ԴՈԼԱՐԻ ՆԱՎԹԱՄԹԵՐՔ

2026 թվականի առաջին կիսամյակում Հայաստանը Ադրբեջանից ներմուծել է շուրջ 18 մլն դոլարի ապրանք, որից 17,8 մլն դոլարը բաժին է ընկել նավթամթերքին (բենզին եւ դիզելային վառելիք): Ներմուծումները սկսվել են 2025 թվականի դեկտեմբերից, իսկ Հայաստանից Ադրբեջան արտահանում չի արձանագրվել, գրում է Լուրեր.com-ը:

2026 թվականի առաջին կիսամյակում Հայաստանը Ադրբեջանից ներմուծել է շուրջ 18 մլն դոլարի ապրանք, որից 17,8 մլն դոլարը բաժին է ընկել նավթամթերքին՝ բենզինին եւ դիզելային վառելիքին: Այս մասին, ըստ «Հետք»-ի, վկայում են Հայաստանի մաքսային ծառայության տվյալները:

Նույն ժամանակահատվածում Ադրբեջանից Հայաստան է ներմուծվել նաեւ 109 հազար դոլարի պլաստմասսայե շինարարական դետալներ: Ադրբեջանից ներմուծումների շրջանակում արտահանում Հայաստանից Ադրբեջան չի արձանագրվել: Ադրբեջանական վառելիքի ներկրումը Հայաստան սկսվել է 2025 թվականի դեկտեմբերին: Սկզբում խոսքը բենզինի, իսկ հետագայում նաեւ դիզելային վառելիքի ներկրման մասին էր:

«Հետք»-ը նշում է, որ ներմուծումների մեկնարկից շուրջ կես տարի անց ադրբեջանական նավթամթերքի մասնաբաժինը հայկական շուկայում շարունակում է աճող հետաքրքրության թեմա մնալ:

ԿՄԵԿՆԻ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդին բանակցություններ կանցկացնեն ուրբաթ՝ սեպտեմբերի 11-ին, ԲՐԻԿՍ գագաթնաժողովի շրջանակներում, հայտնել է Ռուսաստանի նախագահի օգնական Յուրի Ուշակովը: Պուտինը սեպտեմբերի 11-13-ը աշխատանքային այցով կմեկնի Հնդկաստան: Նյու Դելիում պետության ղեկավարը կմասնակցի BRICS գագաթնաժողովին: «Սեպտեմբերի 11-ին առաջին զրույցը կկայանա մեր նախագահի եւ գագաթնաժողովի հյուրընկալող՝ Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի միջեւ», - ասել է Ուշակովը:

ԱՆԵԼՈՒ ԵՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ

«Շուրջ 2 ամիս առաջ, առանց որեւէ հիմքի, կալանավորվեց Գագիկ Ծառուկյանը: Դրանից հետո տեղի ունեցած գործընթացները ո՛չ քաղաքական, ո՛չ իրավական որեւէ տրամաբանության չեն ենթարկվում, եւ այս ամբողջ ժամանակահատվածում տարբեր շրջանակներից մենք մշտապես անասելի մեծ աջակցություն ենք ստացել: Եւ գաղափար առաջացավ ստեղծելու այնպիսի մի միավոր, որն իր աշխատանքները կիրականացնի ավելի համակարգված եւ ավելի կանոնակարգված, եւ ստեղծվեց Գագիկ Ծառուկյանի աջակցության հանրային խորհուրդը, որտեղ ընդգրկված են ընդդիմադիր գործիչներ, իրավապաշտպաններ, հանրային գործիչներ, փաստաբաններ, արվեստի գործիչներ»,-երեկ հրավիրած ասուլիսում ասաց խորհրդի համակարգող, ԲՀԿ խոսնակ Իվետա Տոնոյանը:

«Եւ անմիջապես խորհրդի ձեւավորման հենց հաջորդ օրը Գագիկ Ծառուկյանը հանդես եկավ ուղերձով եւ դիմեց խնդրանք-առաջարկով, որ խորհուրդն ընդլայնի իր գործունեության սահմանները եւ զբաղվի անազատության մեջ գտնվող բոլոր քաղբանտարկյալների, ինչպես նաեւ Բաքվում պահվող մեր գերիների իրավունքների պաշտպանության հարցերով»,-հավելեց Իվետա Տոնոյանը:

Ըստ նրա՝ վերջին ժամանակահատվածում իրեն ժողովրդավարության բաստիոն հռչակած Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանությունը դարձել է պաշտպանության կարիք ունեցող թիվ մեկ ոլորտը:

«Այն գործընթացները, որոնք այսօր տեղի են ունենում ընդդիմադիր քաղաքական գործիչների նկատմամբ, ոչ այլ ինչ են, քան քաղաքական վենդետա եւ քաղաքական հաշվեհարդար, որովհետեւ բոլորն են հասկանում, որ կալանավորված, կալանավորվող եւ կալանավորվելիք բոլոր ընդդիմադիր քաղաքական գործիչների դեմ հարուցված քրեական գործերում իրավական կոմպոնենտը զրո է, եւ այստեղ մենք գործ ունենք բացառապես քաղաքական վրեժխնդրության հետ»,- ասաց նա:

Ըստ խորհրդի համակարգողի՝ Հայաստանում կալանքը դարձել է պատժիչ գործոն իշխանությունների ձեռքին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՐԲ ԿԱՎԱՐՏՎԻ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Իրանի հետ պատերազմը, իր կարծիքով, կավարտվի նոյեմբերին ԱՄՆ-ում կայանալիք միջանկյալ ընտրություններից անմիջապես հետո: Միաժամանակ նա կրկին սպառնացել է հարված հասցնել Իրանի միջուկային ծրագրի հետ կապված «Փիքաքս Մաունթին» (Pickaxe Mountain) օբյեկտին: Թրամփի խոսքով՝ Թեհրանը փորձում է ազդել ԱՄՆ միջանկյալ ընտրությունների արդյունքների վրա, որոնց արդյունքում կորոշվի՝ Հանրապետական կուսակցությունը կպահպանի՞ արդյոք վերահսկողությունը Կոնգրեսում: «Կարծում եմ՝ պատերազմը կավարտվի ընտրություններից անմիջապես հետո, քանի որ նրանք այլեւս չեն կարող դիմանալ», - լրագրողներին ասել է Թրամփը՝հավելելով, որ Իրանը փորձում է ազդել ընտրությունների վրա:

Միաժամանակ ԱՄՆ նախագահը հայտարարել է, որ ԱՄՆ-ը կարող է հարված հասցնել Իրանի «Փիքաքս Մաունթին» օբյեկտին: Reuters-ի տվյալներով՝ խոսքը խիստ պաշտպանված տարածքի մասին է, որտեղ գտնվում են ստորգետնյա թունելային համալիրներ՝ Իրանի վնասված Նաթանզի ուրանի հարստացման օբյեկտի մոտ: Իրանի հետ պատերազմի եւ դրա հետեւանքով վառելիքի գների աճի ֆոնին Թրամփի վարկանիշը, ըստ Reuters-ի, հասել է ռեկորդային ցածր մակարդակի: Միաժամանակ տարածաշրջանում լարվածությունը շարունակում է աճել: Իրանը հայտարարել է, որ չորեքշաբթի օրը Հորմուզի նեղուցի մոտ հարձակվել է 10 նավի վրա, մինչդեռ ԱՄՆ-ը խորտակել է իրանական հինգ նավթատար: Դրանց հետեւանքով նավագնացությունը Հորմուզի նեղուցով շարունակում է խափանված մնալ: Reuters-ի տվյալներով՝ Brent տեսակի նավթի գինը շարունակում է մնալ մեկ բարելի դիմաց 100 դոլարից բարձր: Հորմուզի նեղուցով, որով պատերազմից առաջ անցնում էր աշխարհում նավթի մատակարարումների մոտ մեկ հինգերորդը, չորեքշաբթի օրը անցել է ընդամենը յոթ նավ:

Իրավիճակն ավելի է բարդացել նաեւ Եմենում: Իրանի աջակցությունը վայելող հութիների եւ Սաուդյան Արաբիայի միջեւ վերջին օրերին բախումները սրվել են: Սաուդյան իշխանությունների տվյալներով՝ հութիների վերջին հարձակումների հետեւանքով երկրի հարավային չորս քաղաքներում առնվազն 73 մարդ վիրավորվել է:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀՈՐՄՈՒԶԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանը հեռախոսազրույց է ունեցել իր ֆրանսիացի գործընկեր Ժան-Նոել Բարոյի հետ: Ինչպես հաղորդում է TRT Haber-ը, հղում անելով Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը, նրանք քննարկել են Հորմուզի նեղուցի շուրջ ստեղծված իրավիճակը եւ Մերձավոր Արեւելքում պատերազմը դադարեցնելու ուղղությամբ ընթացող բանակցությունները: Կողմերը քննարկել են նաեւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ հակամարտության կարգավորման ջանքերը, ինչպես նաեւ Պաղեստինում եւ Սիրիայում ստեղծված իրավիճակը:

ՆԱԽԱԳԻԾ

100% ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆՑՆԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ

ArmLur.am-ը պարզել է, որ e-draft իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում սեպտեմբերի 9-ին շրջանառության է դրվել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնետոմսերի նկատմամբ ճանաչել հանրության գերակա շահ:

Նախագծով նախատեսվում է, որ ՀԷՑ-ի 100 տոկոս բաժնետոմսերի ձեռք բերողը կլինի Հայաստանի Հանրապետությունը, իսկ դրանց օտարման գործընթացը համակարգող եւ պատասխանատու պետական լիազոր մարմինը՝ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը:

Նախագծի հիմնավորման համաձայն՝ նման որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է պետության եւ հասարակության անվտանգության, սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության, բնակչության անխափան էլեկտրամատակարարման, սոցիալական եւ ռազմավարական օբյեկտների բնականոն գործունեության, ինչպես նաեւ էներգետիկ մատչելիության, կանխատեսելիության եւ հավասար հասանելիության ապահովման անհրաժեշտությամբ:

Նախագծում նշվում է, որ ՀԷՑ-ը Հայաստանի ամբողջ տարածքում իրականացնում է էլեկտրաէներգիայի բաշխում՝ ապահովելով բնակչության, հիվանդանոցների, դպրոցների, ջրամատակարարման համակարգերի, կապի եւ տնտեսության բնականոն աշխատանքը: Ըստ հիմնավորման՝ էլեկտրամատակարարման խափանումը կարող է անմիջական ազդեցություն ունենալ ազգային անվտանգության, առողջապահության եւ հասարակական կայունության վրա:

Կառավարությունը նախագծում որպես կարեւոր հանգամանք է ներկայացնում նաեւ ՀԷՑ-ի էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիայի դադարեցումը: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 377-Ա որոշմամբ դադարեցվել է ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման թիվ 0092 լիցենզիայի գործողությունը՝ այն ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

Նախագծի համաձայն՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա կառավարությունը դեռեւս 2026 թվականի փետրվարի 17-ին ՀԷՑ-ի բաժնետերերին առաջարկել էր համաձայնեցված կարգով Հայաստանի Հանրապետությանը օտարել ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը: Նշված առաջարկի վերաբերյալ սահմանված ժամկետում բաժնետերերի կողմից արձագանք չի ստացվել:

Փաստաթղթում անդրադարձ է կատարվում նաեւ «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից դատարան ներկայացված հայցերին: Մասնավորապես, նշվում է, որ ընկերությունը վիճարկել է ՀԾԿՀ-ի՝ՀԷՑ-ի լիցենզիան դադարեցնելու որոշումը, սակայն Վարչական դատարանը 2026 թվականի մարտի 27-ի վճռով հայցը մերժել է: Միաժամանակ նախագծում նշվում է, որ հետագա դատական գործընթացների արդյունքում «Տաշիր Կապիտալ»-ին հնարավորություն է տրվել քննարկել կառավարության առաջարկը մինչեւ 2026 թվականի մայիսի 25-ը:

Նախագծի հեղինակները հիմնավորում են, որ ՀԷՑ-ի նկատմամբ ժամանակավոր կառավարման մեխանիզմը չի կարող համարվել համակարգի երկարաժամկետ կառավարման վերջնական լուծում: Այդ պատճառով, ըստ կառավարության նախագծի, բաժնետոմսերի նկատմամբ հանրության գերակա շահի ճանաչումն ու օրենքով սահմանված կարգով դրանց օտարումը դիտարկվում են որպես էներգետիկ համակարգի երկարաժամկետ եւ կայուն կառավարման միջոց:

Նախագծով նախատեսվում է, որ սեփականության օտարման գործընթացը պետք է սկսվի ոչ ուշ, քան 2027 թվականի մայիսի 1-ը: Օտարման նպատակի իրագործումը նախատեսվում է սկսել մինչեւ 2027 թվականի հուլիսի 1-ը, իսկ ավարտել՝2027 թվականի հոկտեմբերի 1-ը:

Նախագիծը շրջանառության մեջ է դրվել սեպտեմբերի 9-ին եւ հանրային քննարկման համար հասանելի կլինի մինչեւ սեպտեմբերի 24-ը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՈՒՆԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿ

Patriot հակահրթիռային համակարգերի խիստ պակասի եւ Ռուսաստանի կողմից բալիստիկ հրթիռների արտադրության աճի պայմաններում Ուկրաինան ունի երկու հիմնական տարբերակ՝ հարվածներից պաշտպանվելու համար: Այս մասին հաղորդում է The Economist-ը:

Patriot համակարգերի համար նախատեսված PAC-3 հակահրթիռային համակարգերի ուկրաինական պաշարները գրեթե սպառվել են: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանը բալիստիկ հրթիռների արտադրությունը մեծացրել է մինչեւ ամսական մոտ 100 միավոր, իսկ Freyja հակահրթիռային պաշտպանության համակարգը դեռեւս պատրաստ չէ օգտագործման: Այս պայմաններում, նշում է The Economist-ը, Ուկրաինան ունի երկու հիմնական տարբերակ:

Առաջինը՝ ենթակառուցվածքների եւ արդյունաբերական օբյեկտների ամրացումն է, միաժամանակ պահեստամասերի բավարար մատակարարման ապահովումով: Երկրորդը՝ այսպես կոչված «left-of-launch» ռազմավարությունն է, որը նշանակում է գործել մինչեւ հրթիռի արձակումը: Այս ռազմավարությունը նպատակ ունի կրճատել Ռուսաստանում հրթիռների քանակը՝հարվածելով դրանց արտադրական գործարաններին եւ ոչնչացնելով արձակման համակարգերը մինչեւ դրանց արձակումը:

Ուկրաինան հույս ունի առաջիկա ամիսներին ընդլայնել իր զինանոցը սեփական բալիստիկ հրթիռներով: Սա ներառում է «Յուժմաշի» կողմից մշակված «Սապսան» հրթիռները, ինչպես նաեւ «Fire Point»-ի կողմից արտադրված FP-7 եւ ավելի մեծ հեռահարության FP-9 հրթիռները:

Իրենց արագության շնորհիվ այս հրթիռները ավելի արդյունավետ կլինեն, քան անօդաչու թռչող սարքերը:

Այնուամենայնիվ, սա շատ դժվար խնդիր է, նշում է «The Economist»-ը: Նույնիսկ Միացյալ Նահանգները, Իրանի նկատմամբ իր լիակատար օդային գերազանցությամբ, պայքարում է թշնամու շարժական սարքերը ոչնչացնելու համար:

ԿԳՈՐԾԱՐԿՎԻ

ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում խոսել է նաեւ անձնագրերի եւ նույնականացման քարտերի գործընթացից եւ ասել, որ ամբողջովին կգործարկվի կենսաչափական համակարգը նոյեմբերի 1-ից.

«Այդ օրանից քաղաքացիներին կկարողանանք գրանցել՝ բիոմետրիկ անձնագրերի տրամադրման համար: Բազմաթիվ գրասենյակներ ենք ունենալու թե՛ Երեւանում, թե՛ մարզերում: Երեւանի 2 մոլերում ենք ունենալու նաեւ գրասենյակներ, որոնք նոր մշակույթ կբերեն հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից: Նոյեմբերի 1-ից այդ գրասենյակները պատշաճ գործարկման ենթական կլինեն»:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՂՄ

«ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԲՈԼՈՐ ՁԵՆՔԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ԵՆ»

Գագիկ Խաչատրյանի պաշտպանական կողմի հայտարարությունը՝ ՀՀ ֆինչական կոմիտեի կողմից 2026 թ. սեպտեմբերի 1-ին եւ 4-ին իրականացված խուզարկությունների վերաբերյալ 2026 թվականի սեպտեմբերի 1-ին եւ 4-ին ՀՀ ֆինչական կոմիտեի ֆինչական խմբի կողմից, Գագիկ Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործի շրջանակներում, իրականացվել են խուզարկություններ, պաշտպանության կողմը հարկ է համարում հանրության եւ իրավապահ մարմինների ուշադրությանը ներկայացնել այդ խուզարկությունների ընթացքում թույլ տրված մի շարք էական խախտումներ, որոնք վկայում են ֆինչական մարմնի կողմից իրականացված գործողությունների ակնհայտորեն ոչ իրավաչափ բնույթի մասին:

1. Հրապարակված բոլոր ձենքերն օրինական են, եւ դրանք առգրավվել են ապօրինի: Առգրավված բոլոր հրազենային միավորները վերցվել են դրանց օրինական տիրապետումը հաստատող թույլտվությունների եւ հաշվառման փաստաթղթերի հետ միասին: Այս հանգամանքն ինքնին հաստատում է հրազենի օրինական պատկանելիությունը, մինչդեռ դրանց առգրավումն իրականացվել է առանց որեւէ իրավաչափ հիմքի՝դարձնելով այն ակնհայտորեն անօրինական:

2. Առգրավումներն իրականացվել են կամայականորեն՝ շոու բեմադրելու նպատակով: Քննչական կոմիտեն առգրավել է Գագիկ Խաչատրյանին ու նրա ընտանիքի անդամներին պատկանող զարդեր եւ ժամացույցներ՝ ակնհայտորեն կամայական ձեւով եւ շոուներ բեմադրելու նպատակով: Այս իրերի օրինական բնույթը հերքող որեւէ ապացույց գոյություն չունի. դրանք ընտանիքի կողմից դեռեւս 1970-ական թվականներից ձեռք բերված կամ որպես նվեր ստացված իրեր են: Դատարանի որոշմամբ՝ որպես որոնման եւ վերցնելու ենթակա օբյեկտներ, նշված չեն եղել նկարներ, զարդեր, ժամացույցներ, զարդատուփեր, գրիչներ եւ գրելու հավաքածուներ: Չնայած դրան՝ քննչական խումբը կամայականորեն առգրավել է նշված իրերը՝ առանց որեւէ փաստական կամ իրավական հիմքի այն մասին, որ դրանք հանդիսանում են հանցագործության գործիք կամ արդյունք, կրում են հանցագործության հետքեր կամ որեւէ այլ կերպ առնչվում են գործի հանգամանքներին:

3. Առկա է առգրավված իրերի եւ մեղադրանքի միջեւ որեւէ առնչության բացակայություն: Առգրավված նկարների, զարդերի, ժամացույցների եւ զարդատուփերի վրա չեն արձանագրվել որեւէ հետքեր, նույնականացնող համարներ կամ այլ տարբերակիչ հատկանիշներ, որոնք թույլ կտային դրանք որեւէ կերպ կապել Գագիկ Խաչատրյանին առաջադրված մեղադրանքի հետ:

4. Խախտվել է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Պաշտպանության կողմի մոտ լուրջ մտահոգություն է առաջացնում այն փաստը, որ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հրապարակվում են անձանց անձնական կյանքին վերաբերող տվյալներ, մասնավորապես՝ բնակարանների ներքին կահավորանքի պատկերներ եւ նմանատիպ այլ տեղեկություններ: Նման գործելաոճը խախտում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ գործող օրենսդրությամբ երաշխավորված՝անձի անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա՝ պաշտպանության կողմը գտնում է, որ 2026 թվականի սեպտեմբերի 1-ի եւ 4-ի խուզարկությունների ընթացքում քննչական մարմնի կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես նաեւ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների էական խախտումներ: Պաշտպանության կողմն իրեն իրավունք է վերապահում սահմանված կարգով վիճարկելու առգրավման գործողությունների իրավաչափությունը եւ պահանջելու անօրինականորեն առգրավված գույքի վերադարձը:

Միաժամանակ, կոչ ենք անում իրավապահ մարմիններին գործել բացառապես օրենքի շրջանակներում՝ հարգելով անձի իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության կողմը շարունակելու է հետեւել գործի ընթացքին եւ, անհրաժեշտության դեպքում, հանրությանը տեղեկացնել հետագա զարգացումների մասին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՄԵՂՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ

NEWS.am-ի տեղեկություններով՝ երեկ ձերբակալվել է Մեղրիի քաղաքապետ Խաչատուր Անդրեասյանը:

Դեռեւս հայտնի չէ՝ ինչ վարույթի շրջանակում է ձերբակալվել Անդրեասյանը:

ArmLur.am-ը երեկ անդրադարձել էր Մեղրիի քաղաքապետ Խաչատուր Անդրեասյանի ունեցվածքին՝ նշելով, որ Մեղրիի համայնքապետ Խաչատուր Անդրեասյանը տարվա ընթացքում ստացել է՝ համապատասխանաբար 100 եւ 50 տոկոս մասնակցություն:

Խաչատուր Անդրեասյանը Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնում է 2024 թվականի մայիսի 30-ից:

ԱԶԱՏՎԵՑ ՊԱՇՏՈՆԻՑ

ՊՆ-ն հաստատում է, որ նախարարի որոշմամբ Ճամբարակի զորամասի հրամանատարը ազատվել է պաշտոնից: Գրել էինք, որ Ճամբարակի զորամասում ազատումներ են սպասվում: ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը պարզել է, թե ինչու են զինվորները երեկոյան ուշ ժամին վազել Ճամբարակից դեպի Վահան գյուղ տանող ճանապարհով: Բանն այն է, որ զինվորները զորամասի ճաշարանում բարձր զրուցել են, ու շտաբի պետը նրանց պատժելու նպատակով որոշել է Ճամբարակ քաղաքից դեպի Վահան գյուղ տանող ճանապարհին վազեցնել:

Եւ ահա, իրավապահները պարզել են, որ գումարտակի շտաբի պետի կողմից նշանակված պատիժը կամ տույժը օրենքով սահմանված բանակային կանոնակարգում չկա:

Դեռ ավելին՝ շտաբի պետը զինվորներին նման պատժի արժանացնելով՝ չի ապահովել վերջիններիս անվտանգությունը, ինչն էլ 7 զինվորի համար դժբախտ պատահարի հետեւանք է դարձել, ու, ցավոք, մեկ զինվորի կյանք փրկել չի հաջողվել:

Հայտնել էինք, որ ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի որոշմամբ Ճամբարակի զորամասի հրամանատարն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Հիշեցնենք, որ օգոստոսի 26-ին հայտնել էինք, որ Ճամբարակ քաղաքից դեպի Վահան գյուղ տանող ճանապարհին 7 զինվոր վրաերթի են ենթարկվել: Դեպքով ձերբակալվել է ՊՆ N զորամասի գումարտակի շտաբի պետը:

ԻՆՉ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ՁՐԻ ՆՄՈՒՇՆԵՐՈՒՄ

Ջրային կոմիտեի նախագահը հայտնում է, որ Բյուրեղավանի ջրամատակարարման համակարգից վերցված ջրի նմուշներում որեւէ շեղում չի արձանագրվել: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 6-ին վեց քաղաքացի դիմել է բուժօգնության, եւ նախնական տվյալներով՝ նրանց մոտ արձանագրվել է աղիքային վարակ: Իրավիճակի ֆոնին Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը՝ ՀՎԿԱԿ-ը, Բյուրեղավանի բնակիչներին հորդորել է ժամանակավորապես չխմել ծորակի ջուրը եւ այն չօգտագործել սննդի պատրաստման նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ԿԵՂԾ ԽՄԻՉՔ

ՆԳՆ քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչության ծառայողները սեպտեմբերի 5-ին օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Գյումրի քաղաքի 52-ամյա բնակիչը, առանց համապատասխան թույլտվության, տանը պատրաստում եւ իրացնում է կեղծ օղի եւ կոնյակ: Նա հրավիրվել է մարզային վարչություն եւ բացատրական աշխատանքի արդյունքում հայտնել, որ տեղեկությունը հավաստի է:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված խուզարկությամբ 52-ամյա տղամարդու՝ Ղուկասյան փողոցում գտնվող տանը հայտնաբերվել է տարբեր մակնշումներով 144 շիշ կեղծ օղի, տարբեր տարողություններով 15 շիշ կեղծ կոնյակ, մոտ 60 լիտր օղի, խցաններ, դատարկ շշեր եւ այլ պարագաներ:

52-ամյա տղամարդը ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին:

Կատարվում է նախաքննություն:

ՀԵՐՈՒՆ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԻՆ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները հերթական օպերատիվ տեղեկությունն իրացրին օգոստոսի 20-ին: Ժամը 20:40-ին Արարատի մարզի Այնթապ գյուղում թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու եւ իրացնելու կասկածանքով քրեական ոստիկանները ձերբակալեցին Երեւանի բնակիչ 50-ամյա տղամարդու: Իր վարած «Մերսեդես-սով» հանդերձ նա տեղափոխվեց Համայնքային ոստիկանության Մասիսի բաժին:

Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց ընդհանուր 6,29 գրամ հերոինով լցված չորս փաթեթ:

Սա օպերատիվ տեղեկության իրացման միայն առաջին փուլն էր: Տեղեկություն կար նաեւ, որ երեւանցուն թմրամիջոցները պարբերաբար իրացրել են Նոր Խարբերդում բնակվող երկու օտարերկրացի տղամարդ:

Մասիսի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ: Հանցագործության ամբողջ շղթայի բացահայտմանն ուղղված հետագա աշխատանքն իրականացվեց իրավապահների ակտիվ համագործակցությամբ: Լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողություններն արդյունք տվեցին օգոստոսի 31-ին:

Հատուկ միջոցառման արդյունքում՝ 20 գրամ հերոինը 300 հազար դրամով իրացնելու պահին, 62-ամյա եւ 46-ամյա օտարերկրացիները ձերբակալվեցին:

Դատարանի որոշմամբ խուզարկություն կատարվեց 46-ամյա օտարերկրացու բնակության վայրում: Հայտնաբերվեցին 132 գրամ հերոին, կես գրամ ափիոն, 6,5 հաբ մեթադոն եւ հոգեմետ 20 դեղահաբ:

Օտարերկրացիները կալանավորվել են: Նախաքննությունը շարունակվում է:

● *Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը Երեւանի պարեկները հայտնաբերել են թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով 46 մեքենա:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆԻՍՏԸ ԿԱՅԱՑԵԼ Է

Սեպտեմբերի 8-ին կայացել է Բերդ համայնքի ավագանու հերթական նիստը, որին մասնակցել է նաեւ ավագանու ՔՊ խմբակցության անդամների մի մասը: Ավագանու նախորդ՝ մայիսի 21-ի եւ հունիսի 18-ի հերթական նիստերին ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները չեն մասնակցել, նրանք բոյկոտել են նիստերը: Բերդ համայնքի կառավարման հարցում գործում է ավագանիում մեծամասնություն ունեցող «Ջորավոր համայնք» խմբակցության եւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կոալիցիա, որով համայնքի ղեկավարի առաջին տեղակալ եւ համայնքի 4 բնակավայրերի վարչական ղեկավարներ էին նշանակվել ՔՊ կուսակցության ներկայացուցիչներ:

Համայնքի ավագանու սեպտեմբերի 8-ի նիստի օրակարգում ընդգրկված են եղել երեք տասնյակ հարցեր, որոնցից ամենակարեւորները համայնքի ավագանու որոշմամբ «Բերդի ջրամատակարարման ծառայություն», «Բերդի ճանապարհների սպասարկում եւ լուսավորում», «Բերդի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների ստեղծումն էր: Նախկինում նշված ծառայություններն իրականացնում էր Բերդի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Բերդի կոմունալ ծառայության» համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունը:

«Բերդի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ն ավելի քան 300 միլիոն դրամի տուգանքի եւ տույժի է ենթարկվել այն բանի համար, որ այդ հիմնարկի տարեկան շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը, ուստի հիմնարկությունը պետք է ավելացված արժեքի հարկ վճարեր, սակայն այդ հարկատեսակը չի վճարել: Համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանին հարցրի՝ ինչպե՞ս է եղել, որ իրենք տեղյակ չեն եղել հարկային օրենսդրության այդ դրույթի վերաբերյալ: Նա հայտնեց, որ հարկային այդ դրույթը գործում է 2019 թվականից, ինքը Բերդ համայնքը ղեկավարում է 2022 թվականից, սակայն համայնքապետարանում այդ մասին տեղյակ չեն եղել: Նա նշեց, որ Հայաստանում 22 համայնքներ եւս այդ մասին տեղյակ չեն եղել:

Համայնքի ղեկավարը հայտնեց, որ Բերդի կոմունալ ծառայության աշխատողները կընդգրկվեն նորաստեղծ ՀՈԱԿ-ներում եւ կիրանանացնեն Բերդ համայնքի համար այդքան կարեւոր գործառնույթները: Ա. Հակոբյանն ասաց, որ սեպտեմբերի 8-ին ավագանու կայացրած կարեւոր որոշումներից մեկը այն է, որ հոկտեմբերի 1-ից Բերդի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզներում երեխաների ուսուցումը կլինի անվճար: Համայնքի ղեկավարի խոսքերով՝ ներկայումս պետական բյուջեի, Բերդ համայնքի եւ այլ կազմակերպությունների ֆինանսավորմամբ Բերդ համայնքի բնակավայրերում 14 մանկապարտեզների շենքերը վերանորոգվում են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել պաշտոնական անձանց գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի վերաբերյալ հայտարարագրերը եւ դրանք ներկայացնել հանրությանը: Այս անգամ ուսումնասիրել ենք Սյունիքի մարզի Տաթեւ համայնքի ղեկավար Սամվել Լալայանի ունեցվածքը:

Սամվել Լալայանը Տաթեւ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնում է 2021 թվականի նոյեմբերի 15-ից:

2025 թվականի սկզբին Սամվել Լալայանի հայտարարագրում առկա է եղել 8 միավոր անշարժ գույք: Դրանց թվում են Տաթեւում գտնվող համատեղ սեփականությամբ բնակարան, Գորիսում գտնվող միանձնյա սեփականությամբ բնակարան, ինչպես նաեւ Տաթեւում գտնվող չորս հողամաս, բազմամյա տնկի եւ անհատական բնակելի տուն՝ տնտեսական շինություններով:

Տաթեւի բնակարանը Լալայանը ձեռք է բերել 2025 թվականի հունվարի 15-ին՝ նվիրատվության եղանակով, իսկ Գորիսի բնակարանը՝ 2024 թվականի հունվարի 15-ին, նույնպես նվիրատվությամբ: Տաթեւում առկա չորս հողամասը, բազմամյա տնկին եւ բնակելի տունը հայտարարագրում նշված են որպես 1991 թվականի փետրվարի 20-ին ձեռք բերված գույք:

Տարվա ընթացքում նոր անշարժ գույք ձեռք բերելու կամ գույք օտարելու վերաբերյալ հայտարարագրում տվյալներ չկան: Տարվա վերջին նշված գույքը պահպանվել է:

Հայտարարագրի համաձայն՝ Սամվել Լալայանը տրանսպորտային միջոց չի ունեցել:

Եկամուտ

2025 թվականին Տաթեւի համայնքապետը հայտարարագրել է ընդհանուր 4 մլն 918 հազար 180 դրամ եկամուտ: Ամբողջ գումարը ստացվել է աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումների տեսքով՝ Տաթեւի համայնքապետարանի աշխատակազմից:

Դրամական միջոցներ

2025 թվականի սկզբին նրա բանկային հաշվի մնացորդը կազմել է 300 հազար դրամ, իսկ տարեվերջին՝ 150 հազար դրամ: Այսինքն՝ տարվա ընթացքում բանկային հաշվի մնացորդը նվազել է 150 հազար դրամով:

Կանխիկ դրամական միջոցները, հակառակը, աճել են: Տարվա սկզբին Սամվել Լալայանը հայտարարագրել է 100 հազար դրամ կանխիկ գումար, իսկ տարեվերջին՝ 200 հազար դրամ:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սամվել Լալայանի վարկի մայր գումարի մնացորդը կազմել է 3 մլն դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԿՍՏԱՆԱՆ 5 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ եթե նոյեմբերին կայանալիք միջանկյալ ընտրություններում Հանրապետական կուսակցությունը վերահսկողություն հաստատի ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի նկատմամբ, յուրաքանչյուր չափահաս ամերիկացի կստանա 5 հազար դոլարի վճարում:

Թրամփն այդ մասին հայտարարել է Դալասում՝ Հանրապետական կուսակցության համագումարի ժամանակ՝ առաջարկը անվանելով «Թրամփի դիվիդենդներ»: Նրա խոսքով՝ գումարը պետք է ծախսվի ԱՄՆ տարածքում: Միաժամանակ նախագահը չի մանրամասնել, թե ինչպես է իրականացվելու ծրագիրը եւ որտեղից են հատկացվելու անհրաժեշտ միջոցները:

BBC-ի փոխանցմամբ՝ ԱՄՆ-ում կա շուրջ 270 միլիոն չափահաս քաղաքացի: Հետեւաբար, յուրաքանչյուրին 5 հազար դոլար տրամադրելու ծրագիրը պետական բյուջեի համար կարող է արժեւնալ մոտ 1.3 տրիլիոն դոլար:

Թրամփի հայտարարությունը արդեն քննադատության է արժանացել: Դեմոկրատները այն որակել են որպես «դատարկ խոստում», իսկ որոշ մասնագետներ հարցեր են բարձրացրել ծրագրի իրավական հնարավորության վերաբերյալ: ԱՄՆ-ում Կոնգրեսն է հաստատում պետական ծախսերը, իսկ Թրամփը չի հստակեցրել՝ արդյոք նախատեսում է Կոնգրեսից ստանալ նման վճարումների հաստատումը:

Միաժամանակ իրավական հարց է առաջացել, քանի որ դաշնային օրենքներն արգելում են քվեարկության վրա ազդելու նպատակով վճարումներ կատարելը: Սակայն որոշ իրավաբաններ կարծում են, որ Թրամփի առաջարկը կարող է դիտարկվել որպես հարկերի կրճատման խոստում, ինչը թույլատրելի է:

Թրամփը նախկինում եւս հանդես է եկել քաղաքացիներին ուղղակի վճարումներ տրամադրելու առաջարկով: Մասնավորապես, նա առաջարկել էր 2 հազար դոլարի չեկեր, որոնք պետք է ֆինանսավորվեին մաքսատուրքերից ստացված եկամուտներով:

Ա. Վ.

ԿՈՉ Է ԱՐԵԼ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ

Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսը կարծում է, որ թագավորությունը պետք է ավելի լավ պատրաստվի Սեուտա քաղաքում տեղի ունեցածի նման «հարձակումներին»:

Նա ասել է, որ երկրի իշխանությունները չէին սպասում անօրինական միգրանտների այդքան մեծ հոսքին: Նա կարծում է, որ կառավարությունը պետք է բարելավի իրավիճակը մի քանի ռլորտներում:

«Առաջինը այն է, թե ինչպես ենք մենք պատրաստվում այս տեսակի հիբրիդային հարձակումներին»,- ասել է վարչապետը TVE-ին տված հարցազրույցում:

Նա առաջարկել է զգալիորեն ավելացնել ներդրումները սահմանային վերահսկողության համակարգում:

Սանչեսը կարծում է, որ «ավելի քան երբեւէ անհրաժեշտ է», որ Իսպանիայի թագավոր Ֆելիպե VI-ը այցելի Սեուտա:

Հուլիսի վերջին տասնյակ հազարավոր անօրինական ներգաղթյալներ Սեուտա էին հասել ջրային ճանապարհով՝ շրջանցելով քաղաքը Մարոկկոյից բաժանող ծովափնյա ջրարգելակը: Ճգնաժամի պատճառով Մադրիդը որոշել էր տեղակայել զինվորականներին՝ քաղաքում անվտանգությունն ապահովելու համար: Ըստ իշխանությունների՝ քաղաք կարող է մուտք գործած լինել մինչեւ 80,000 մարդ, սակայն, ենթադրաբար, անօրինական ներգաղթյալների մեծ մասն արդեն վերադարձել է Մարոկկո:

● *Մարզերում օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը պարեկները հայտնաբերել են թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով 105 մեքենա:*

ԼՈՒՐԵՐ

ԺԱՄԱՆԱԿԸ ԿՍՊԱՌՎԵՐ

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության Եվրոպական հարցերով նախարարի պատվիրակ Բենջամին Հադդադը հայտարարել է, որ անհրաժեշտ չի համարում արձագանքել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի յուրաքանչյուր գրառմանը, այն բանից հետո, երբ նա հրապարակեց քարտեզ, որտեղ Կարիբյան ավազանում գտնվող ֆրանսիական անդրծովյան տարածքները պատկերված էին ամերիկյան դրոշի գույներով:

«Եթե մենք արձագանքեինք Սպիտակ տան եւ Դոնալդ Թրամփի յուրաքանչյուր գրառմանը, մեր ժամանակը կսպառվեր: Հետեւաբար, ես կարծում եմ, որ չարժե չափազանց շատ մեկնաբանություններ տալ եւ չափազանց շատ արձագանքել յուրաքանչյուր քմահաճույքի», - ասել է Հադդադը Sud Radio-ին տված հարցազրույցում:

Ավելի վաղ Թրամփը իր Truth Social սոցիալական ցանցում հրապարակել էր քարտեզ, որտեղ տասնյակ երկրներ, այդ թվում՝ Կուբան, Կանադան, Մեքսիկան, Կարիբյան ավազանը, Գրենլանդիան եւ Իսլանդիան պատկերված էին ամերիկյան դրոշի գույներով:

ՔՆՆԱՐԿԵԼ Է ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հանդիպել է Հայաստանում բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ վարդերի աճեցմամբ զբաղվող գործարարների հետ, գրում է Լուրեր.com-ը:

Քննարկվել են ջերմոցային ոլորտի պետական քաղաքականությունը, արտահանման խթանման գործող աջակցության մեխանիզմները, արտահանման գործընթացների կազմակերպումը, ինչպես նաեւ ոլորտի զարգացման եւ մրցունակության բարձրացման հնարավորությունները:

Առանձին անդրադարձ է կատարվել ջերմոցային վարդերի արտահանման լոգիստիկ եւ տրանսպորտային առանձնահատկություններին, մաքսային ձեւակերպումներին եւ ոլորտին վերաբերող այլ հարցերի:

Պապոյանն ընդգծել է ոլորտի անխափան գործունեության, հայկական ջերմոցային վարդերի արտահանման մրցունակության բարձրացման եւ նոր շուկաներում հայկական արտադրանքի դիրքերի ամրապնդման կարեւորությունը:

ԿՐԵՄԼՈՒՄ ԿՈՉ ԵՆ ԱՐԵԼ

Տիեզերքը պետք է մնա բազմակողմ համագործակցության եւ երկխոսության տարածք, այլ ոչ թե դառնա առճակատման հարթակ: Այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը, հայտնում է Լուրեր.com-ը:

«Տիեզերքը պետք է լինի փոխադարձ համագործակցության եւ երկխոսության հարթակ, այլ ոչ թե առճակատման վայր»,- ասել է Պեսկովը:

Նա այս հայտարարությունն արել է BRICS-ի գագաթնաժողովին ընդառաջ լրագրողների համար կազմակերպված ճեպազրույցի ժամանակ:

ՈՎ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՈՐՈՇԵԼՈՒ

Գ

7-9 ՄԼՆ ԴՈԼԱՐ՝ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Տարեկան 7-9 մլն ԱՄՆ դոլար՝ Ամուլսարի ազդեցությունը կրող համայնքների զարգացման ծրագրերի համար. «Լիդիան Արմենիայի» կողմից տրամադրվող այս միջոցների տնօրինման մեխանիզմը նախատեսվում է իրականացնել եռակողմ համաձայնագրով, որը ստորագրել են ՀՀ կառավարությունն՝ ի դեմս էկոնոմիկայի նախարարության, «Լիդիան Արմենիան» եւ ազդակիր համայնքները:

Ծրագիրն ընդգրկում է Սիսիան, Ջերմուկ եւ Վայք համայնքները: Նախատեսվում է, որ միջոցները կուղղվեն համայնքների զարգացման առաջնահերթություններին՝ մասնավորապես ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության եւ համայնքային այլ ծրագրերի իրականացմանը:

«Լիդիան Արմենիայի» սոցիալական բաժնի ղեկավար Լուսինե Հակոբյանը Տնտեսական լրագրողների ակումբի հետ զրույցում նշեց, որ կարեւոր սկզբունքն այն է, որ ֆինանսավորվեն հենց համայնքների կողմից առաջնահերթ համարվող ծրագրերը:

Միջոցների կառավարման համար առաջիկայում նախատեսվում է ստեղծել Ամուլսարի համայնքային զարգացման հիմնադրամ, որը հանդես կգա որպես ծրագրի իրականացման երրորդ կողմ: Ֆինանսավորման վերաբերյալ որոշումները կկայացնի հիմնադրամի խորհուրդը:

Խորհուրդը բաղկացած կլինի 7 անդամից. չորսը կներկայացնեն «Լիդիան Արմենիան», իսկ երեքը՝ համապատասխան ազդակիր համայնքները: Որոշումները կկայացվեն ձայների մեծամասնությամբ:

Լուսինե Հակոբյանի խոսքով՝ խորհրդի հիմնական գործառույթը լինելու է ֆինանսավորման վերաբերյալ որոշումների կայացումը, իսկ հիմնադրամի գործիքակազմն ապահովելու է ծրագրերի առավել արդյունավետ իրականացումը:

Տարեկան սոցիալական ներդրումը շահագործման փուլում լինելու է 7 մլն դոլար: Այդ գումարը կարող է հասնել 9 մլն դոլարի, եթե միջազգային շուկաներում ոսկու մեկ ունցիայի գինը գերազանցի 3550 դոլարը: Ներդրումների տրամադրման սկիզբը հաշվարկվում է 2025թ. հուլիսից՝ շինարարության մեկնարկի ամսաթվից, ուստի առաջին հատկացումը լինելու է 1,5 տարվա համար եւ կազմելու է 10,5 մլն դոլար:

Ընկերության ներկայացուցչի խոսքով՝ ընտրված մեխանիզմը պետք է ապահովի միջոցների հստակ եւ թափանցիկ ծախսումը: Նախատեսվում է, որ տարեկան ֆինանսավորումը կիրականացվի եռամսյականին կտրվածքով, իսկ դրա արդյունքում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքների վրա առավել տեսանելի կլինի մի քանի տարվա ընթացքում:

Միջոցները կարող են ուղղվել ենթակառուցվածքների բարելավմանը, կրթական եւ առողջապահական հաստատությունների ու ծրագրերի զարգացմանը, ինչպես նաեւ համայնքային նշանակության այլ սոցիալ-տնտեսական նախաձեռնությունների:

Այսպիսով, ծրագրի հայտարարված նպատակը համայնքների համար կայուն, երկարաժամկետ եւ ոչ թե անհատական բնույթի արդյունք ապահովելն է:

Ո՞վ է որոշելու՝ ինչի վրա ծախսել գումարը

Եռակողմ համաձայնագրի շուրջ քննարկումները, ըստ ընկերության, տեւել են ավելի քան ութ ամիս: Ֆինանսական միջոցների տնօրինումն իրականացնելու է Ամուլսարի համայնքային զարգացման հիմնադրամը, իսկ ծրագրերի վերաբերյալ որոշումները՝ հիմնադրամի խորհուրդը:

Միեւնույն ժամանակ, եթե որեւէ ծրագիր ֆինանսավորվի, դրա իրականացման համար կապալառուի ընտրությունը նախատեսվում է վերապահել համայնքին: Հիմնադրամը եւս մասնակցություն կունենա գործընթացին:

Միջոցների բաշխման մեկ այլ կարեւոր առանձնահատկություն էլ կա. հանքի ազդեցությունը կրող բնակավայրերին պարտադիր ուղղվելու է խոշորացված համայնքին հատկացրած ընդհանուր գումարի առնվազն 20 տոկոսը:

Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ Սիսիանը, Ջերմուկը եւ Վայքը խոշորացված համայնքներ են, եւ դրանց կազմում ընդգրկված են նաեւ այլ բնակավայրեր. շատ կարեւոր է, որ ազդակիր բնակավայրերն ունենան երաշխավորված մասնաբաժին

Ջերմուկը՝ որպես առանձին զգայուն ուղղություն

Ծրագրի շրջանակում առանձին ուշադրության է արժանանում Ջերմուկը՝ որպես առողջարանային քաղաք: Ընկերության ներկայացուցչի խոսքով՝ հաշվի է առնվել քաղաքի առողջարանային միջավայրի պահպանման անհրաժեշտությունը:

Այդ համատեքստում «Լիդիան Արմենիայում» նշում են, որ աշխատողների համար ստեղծվել է առանձին կացարանային ենթակառուցվածք, որպեսզի նրանց կենցաղային կարիքները հնարավորինս չազդեն Ջերմուկ քաղաքի առողջարանային միջավայրի վրա:

Ընկերության տեսլականով՝ Ջերմուկի հետագա զարգացումը պետք է կապված լինի բարելավված ենթակառուցվածքների եւ ծառայությունների միջոցով առողջարանային քաղաքի դիրքի ամրապնդման հետ:

Ի վերջո, ծրագրի իրական արդյունավետությունը կախված կլինի ոչ միայն տրամադրվող միլիոնավոր դոլարների չափից, այլեւ նրանից, թե որքան թափանցիկ եւ մասնակցային կլինի դրանց բաշխման գործընթացը, ինչ ծրագրեր կառաջարկվեն եւ կընտրվեն եւ ինչ չափելի արդյունք դրանք կապահովեն համայնքների բնակիչների համար:

ՄԱԿՐՈՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻՆ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը կոչ է արել Եվրոպային առաջիկա տասը տարիների ընթացքում զարգացնել սեփական օդաչուավոր տիեզերական թռիչքների ծրագիրը: Մակրոնը նման հայտարարություն է արել Փարիզում անցկացվող միջազգային տիեզերական գագաթնաժողովի ժամանակ՝ ընդգծելով, որ Եվրոպայի տիեզերական ծրագիրը դեռեւս խոցելի է եւ անհրաժեշտ է մեծացնել ներդրումները: Նրա ներկայացրած ծրագրով՝ երկու տարվա ընթացքում եվրոպական «Nyx» բեռնատար պարկուճը պետք է միանա Միջազգային տիեզերականին, հինգ տարվա ընթացքում «Argonaut» լուսնային սարքը պետք է վայրէջք կատարի Լուսնի վրա, իսկ տասը տարվա ընթացքում Կուրուից պետք է մեկնարկի առաջին եվրոպական օդաչուավոր պարկուճը՝ եվրոպացի եւ այլ երկրների տիեզերագնացներով: Եվրոպական տիեզերական գործակալության ղեկավար Յոզեֆ Աշբախերը նշել է, որ նման անկախ կարողություններ ստեղծելու համար առաջիկա տասը տարիներին անհրաժեշտ կլինի տարեկան շուրջ 1 մլրդ եվրոյի ներդրում: Եվրոպան մինչ այժմ օդաչուավոր տիեզերական առաքելություն ինքնուրույն չի իրականացրել եւ տիեզերագնացների թռիչքների համար հիմնականում ապավինել է Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հնարավորություններին:

Ա. Վ.

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՇՈՒՐՋ 1,5 ՄԻԼԻՈՆ ԵՐԿՐՊԱԳՈՒ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ Է ԳՐԱՆՑԵԼ

Մայլի Սայրուսի առաջիկա երկու համերգները Հոլիվուդ Բոուլում արդեն իսկ մեծ իրարանցում են առաջացրել: Սեպտեմբերի 9-ին երգչուհու համերգների նախավաճառքի հերթում հայտնվել է գրեթե 1,5 միլիոն երկրպագու, ինչը նոր ռեկորդ է սահմանել պահանջարկի մակարդակով: Համերգները նախատեսված են հոկտեմբերի 16-ին եւ 18-ին եւ կդառնան Մայլի Սայրուսի առաջին խոշոր ելույթները 2022 թվականի նոյեմբերից ի վեր:

Երգչուհին վերջին անգամ մեծ բեմում հանդես էր եկել Մեխիկոյում՝ Corona Capital երաժշտական փառատոնի շրջանակում: Այս վերադարձը համընկնում է նրա կարիերայի նոր փուլի հետ: Սեպտեմբերի 18-ին Atlantic Records-ը կթողարկի Սայրուսի 10-րդ ստուդիական ալբոմը՝ «Bass Persuades» անվամբ: Ալբոմի մասին Սայրուսը հայտարարել էր սեպտեմբերի 1-ին՝ նշելով, որ երաժշտությունն իր համար միաժամանակ ուժեղ, խոցելի, քաղցր ու հզոր զգացողություն է:

Նոր ալբոմի համանուն երգն արդեն իսկ մեծ ուշադրություն է գրավել: 80-ականների ոճով dance-pop ստեղծագործությունը այս շաբաթ ԱՄՆ ռադիոկայաններում դարձել է ամենաշատ ավելացված երգը: Երգում Սայրուսը անդրադառնում է էկրաններով լի ժամանակակից աշխարհին՝ կոչ անելով մարդկանց մի կողմ դնել հեռախոսները եւ կրկին վերադառնալ պարահրապարակ:«BassPersuades»-ը նաեւ հաջող մեկնարկ է ունեցել սթրիմինգային հարթակներում. երգը սեպտեմբերի 4-6-ի ընթացքում Spotify-ի ԱՄՆ-ի Top Songs չարթում դեբյուտ է կատարել 1-ին հորիզոնականում, իսկ համաշխարհային չարթում՝ 2-րդ: Այն նաեւ հասել է ԱՄՆ-ի Tunes-ի առաջին հորիզոնականին:

«Մայլի»՝ առանց Սայրուս նոր ալբոմով երգչուհին նաեւ փոխում է իր հանրային ներկայացման ձեւը: Նախագիծը թողարկվում է պարզապես «Miley» անունով՝ առանց «Cyrus» ազգանվան: Այս նոր փուլին աջակցել է նաեւ նրա հայրը՝ քանթրի երաժիշտ Billy Ray Cyrus-ը:

Նա դստեր նոր անվանման ձեւաչափը համեմատել է այնպիսի լեգենդար արտիստների հետ, ինչպիսիք են DollyParton-ը, Cher-ը, Elvis-ը եւ Prince-ը: Բիլլի Ռեյ Սայրուսը նշել է, որ մեկ անունով ներկայանալը «բնական առաջընթաց» է սուպերսթարի եւ լեգենդի համար: Իսկ Հոլիվուդ Բոուլի համերգները Մայլիի համար առանձնահատուկ նշանակություն ունեն: Երգչուհին պատմել է, որ այդ վայրը իր սիրելի վայրն է երաժշտություն լսելու եւ սիրելի արտիստներին տեսնելու համար: Նա բազմիցս նստել է Հոլիվուդ Բոուլի հանդիսատեսի շարքերում, սակայն դեռ երբեք այնտեղ բեմ չի բարձրացել: «Լոս Անջելեսն իմ սիրտն է, եւ ես այն տուն եմ բերում»,- ասել է երգչուհին: Երկու համերգներին էլ Մայլի Սայրուսին կմիանա հատուկ հյուր՝MODEL/ACTRIZ-ը:

Համերգների ընդհանուր վաճառքը մեկնարկել է սեպտեմբերի 10-ին՝ժամը 10:00-ին՝Խաղաղօվկիանոսյան ժամանակով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹԻՄԻ ԴԵՄ

Նիդերլանդական «Ֆեյենորդի» գլխավոր մարզիչ Ջովանի վան Բրոնկխորստը մեկնաբանել է Չեմպիոնների լիգայի խաղարկության լիգայի փուլի առաջին տուրում կատալոնական «Բարսելոնայից» կրած ջախջախիչ պարտությունը (1-5), գրում է armsport-ը: «Կարծում եմ՝ մենք խաղում էինք տվյալ պահին աշխարհի լավագույն թիմի դեմ: Փորձեցինք ցուցադրել մեր ֆուտբոլը եւ պարզապես չնահանջեցինք դեպի մեր դարպասը: Այս մասին ինձ ասաց նաեւ Հանսի Ֆլիկը, երբ շնորհավորում էի նրան հաղթանակի կապակցությամբ: Մենք շատ արագ գոլ բաց թողեցինք՝արդեն 3-րդ րոպեին, բայց, ի վերջո, փորձեցինք խաղալ մեր խաղը»,- հոլանդացի մասնագետի խոսքերը մեջբերում է RTL-ը:

Վան Բրոնկխորստը նաեւ քննադատել է իր խաղացողների գործողությունները պաշտպանությունում. «Մի քանի գոլ բաց թողեցինք սեփական կոպիտ սխալների պատճառով: Առաջին գոլի դրվագում մենք հետեւողական չգտնվեցինք մրցակցի նկատմամբ, իսկ տուգանայինի խաղարկումից հետո էլ գնդակն անցավ մեր կենդանի պատի միջով: Բայց ժամանակ առ ժամանակ մենք լավ էինք գործում՝ չնայած գործադրվող ճնշմանը: Հայտնացուցակում ընդգրկված իմ 18 ֆուտբոլիստների համար սա առաջին հանդիպումն էր Չեմպիոնների լիգայում: Նրանք պետք է դասեր քաղեն այս փորձից»:

Նշենք, որ Չեմպիոնների լիգայի հաջորդ տուրում «Ֆեյենորդը» կմրցի իտալական «Կոմոյի», իսկ «Բարսելոնան» ուժերը կչափի թուրքական «Գալաթասարայի» հետ:

1000 ԳՈԼ ԿԽՓԻ

Անգլիական «Լիվերպուլի» եւ Անգլիայի ազգային հավաքականի նախկին պաշտպան Ջեյմի Կարագերը հիացական խոսքեր է հնչեցրել «Մանչեսթեր Սիթիի» նորվեգացի հարձակվող Էրլինգ Հալանդի արդյունավետության հասցեին:

«Պարզապես չեմ կարող պատկերացնել, որ Հալանդը 1000 գոլ չի խփի կամ չի դառնա պատմության լավագույն ռմբարկուն: Արդյունավետության եւ վիճակագրության առումով ես երբեք նման բան չեմ տեսել: Այս ամենը կրկնվում է յուրաքանչյուր հանդիպման ժամանակ, եւ քանի որ նա դա անում է անընդհատ, դա այլեւս արտասովոր երեւույթ չի թվում:

Նա նոր երկու գնդակ հեղինակեց Չեմպիոնների լիգայի արտագնա խաղում: Եթե դա աներ մեկ այլ հարձակվող, ապա դա կհամարվեր մեծագույն իրադարձություն, իսկ նրա դեպքում ամեն ինչ ընկալվում է որպես սովորական օրինաչափություն: Ես պարզապես այլ սցենար չեմ տեսնում. ի վերջո, նա կդառնա մեծագույն ռմբարկուն եւ կխփի ավելի շատ գոլ, քան իրենից առաջ որեւէ մեկը»,- ըստ armsport-ի՝Կարագերի խոսքերը մեջբերում է CBS Sports-ը:

Հիշեցնենք, որ ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի խաղարկության լիգայի փուլի առաջին տուրում պորտուգալական «Պորտուի» դեմ կայացած խաղում (2-0) Հալանդը դարձել էր դուբլի հեղինակ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴՈՒՐՍ Է ԵԿԵԼ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ

Աշխարհի 50-րդ ռակետ, հայազգի թենիսիստ Կարեն Խաչանովը դուրս է եկել US Open-ի 2026 թվականի խաղարկության կիսաեզրափակիչ: Քառորդ եզրափակիչում Խաչանովը հաղթում էր բելգիացի Ալեքսանդր Բլոքսին՝6:2, 7:5, 3:2 հաշվով, երբ մրցակիցը վնասվածքի պատճառով դադարեցրեց հանդիպումը:

Խաչանովի համար սա կարիերայի երրորդ «Մեծ սաղավարտի» կիսաեզրափակիչն է եւ երկրորդը՝US Open-ում: Վերջին անգամ նա Նյու Յորքում այս փուլ հասել էր 2022 թվականին:

Կիսաեզրափակիչում Խաչանովը կհանդիպի աշխարհի 2-րդ ռակետ Ալեքսանդր Զվերեւին: Մյուս կիսաեզրափակիչում միմյանց դեմ կխաղան Ֆրենսիս Տիաֆոն եւ Բեն Շելթոնը:

ՆՇԵԼ Է ԻՐ ՖԱՎՈՐԻՏԻՆ

Ֆրանսիայի ազգային հավաքականի նախկին հարձակվող Թիերի Անրին կիսվել է իր կարծիքով այն մասին, թե ով է արժանի ստանալու այս տարվա «Ոսկե գնդակը»: «Նախորդ տարի ամեն ինչ շատ ավելի պարզ էր. այն ժամանակ ակնհայտ ֆավորիտն Ուսման Դեմբելեն էր: Հիմա ընտրություն կատարելը շատ ավելի բարդ է:

Վերցնենք, օրինակ, Հարի Քեյնին կամ Մայքլ Օլիսեին, որն ավարտված մրցաշրջանում Գերմանիայի լավագույն ֆուտբոլիստն էր: Անգլիացիները, եթե նրանց հարցնեք աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստի մասին, հաստատ կնշեն Ջուդ Բելինգեմին: Թեեւ նրա մրցաշրջանը «Ռեալում» հաջողված անվանել չի կարելի:

Առանձին պետք է խոսել Ռոդրիի մասին. նա իսկապես հիանալի էր աշխարհի առաջնությունում եւ իրավամբ արժանացավ մրցաշարի լավագույն խաղացողի կոչմանը: Սակայն մրցաշրջանի ընթացքում նա այնքան էլ շատ հանդիպումներ չանցկացրեց: Լամին Յամալն իր հերթին չկարողացավ բացահայտվել աշխարհի առաջնությունում՝ խանգարեց վնասվածքը: Չի կարելի մոռանալ նաեւ Էրլինգ Հալանդի մասին. բարդ է անտեսել ցանկացած դիրքից գոլ խփելու նրա ունակությունը: Եվ այնուամենայնիվ, իմ կարծիքով, նա զիջում է որոշ այլ հավակնորդների: Խվիչա Կվարացխելիան չմասնակցեց աշխարհի առաջնությանը, իսկ Լիոնել Մեսսին կարող էր լրջորեն հավակնել «Ոսկե գնդակին», եթե Արգենտինան հաղթեր մրցաշարում, բայց, ցավոք, դա տեղի չունեցավ:

Ի վերջո, ես հակված եմ Կիլիան Մբապեի թեկնածությանը. հենց նա է իմ ֆավորիտը: Ոմանք կարող են առարկել, որ նա թիմային տիտղոսներ չի նվաճել, բայց նրա անհատական նվաճումներն ինքնին խոսուն են. նա դարձավ Չեմպիոնների լիգայի, Լա լիգայի եւ աշխարհի առաջնության լավագույն ռմբարկուն: Մայքլ Օլիսեն նույնպես տպավորիչ է՝ հատկապես գոլային փոխանցումների քանակով:

Պարզապես մտածեք, թե քանի գոլ է խփել Մբապեն աշխարհի առաջնությունում եւ Չեմպիոնների լիգայում. դա ապշեցուցիչ է: Ուզում եմ ընդգծել, որ բոլոր թեկնածուները լուրջ խաղացողներ են, այլ ոչ թե պատահական մարդիկ: Սակայն անձամբ ես իմ ձայնը կտայի Կիլիանին: Օլիսեն, անշուշտ, մակարդակով նույնպես շատ մոտ է նրան»,- armsport-ի փոխանցմամբ՝ Անրիի խոսքերը մեջբերում է Give me Sport-ը:

Հիշեցնենք, որ 2026 թվականի «Ոսկե գնդակի» հանձնման հանդիսավոր արարողությունը կկայանա հոկտեմբերի 26-ին:

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Կատալոնական «Բարսելոնայի» բրազիլացի հարձակվող Ռաֆինյան չի ընդգրկվել «Ոսկե գնդակի» դափնեկրի կոչմանը հավակնող 30 ֆուտբոլիստների ցանկում: Դրան հաջորդած օրը բրազիլացին փայլուն հանդիպում անցկացրեց Չեմպիոնների լիգայում՝ նիդերլանդական «Ֆեյենորդի» դեմ խաղում (5-1): Ռաֆինյան դարձավ դուբլի հեղինակ եւ ճանաչվեց հանդիպման լավագույն խաղացող:

Ետխաղյա հարցազրույցի ժամանակ լրագրողներն սպասելիորեն հետաքրքրվել են հեղինակավոր մրցանակի հավակնորդների ցանկից նրա բացակայության փաստով, սակայն ֆուտբոլիստը չի ցանկացել ծավալվել այդ թեմայով, գրում է armsport-ը:

«Ես չեմ ցանկանում խոսել «Ոսկե գնդակի» մասին, ես խոսում եմ «Բարսելոնայի» մասին: Մենք հիանալի ենք մեկնարկել այս մրցաշրջանում»,- բրազիլացու խոսքերն է մեջբերում մամուլը՝ «Կամպ Նոու» մարզադաշտում կայացած խաղից հետո:

Հավելենք, որ «Բարսելոնան» իր հաջորդ հանդիպումը կանցկացնի սեպտեմբերի 13-ին. Իսպանիայի Լա լիգայի շրջանակում կատալոնացիներն արտագնա խաղում ուժերը կչափեն «Լեւանտեի» հետ:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 20-ին՝ ժամը 13:00-ին, կկայանա «Ճպուռն ու մրջյունը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Արդյո՞ք գործարքի կամ գործարար հարաբերության իրական շահառու կարող է լինել անչափահաս անձը:

Գալուստ Օհանյան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն գործարքում կամ գործարար հարաբերությունում իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը՝ ա) որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, եւ/կամ բ) որն իրականում վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունը իրականացվում է, եւ/կամ գ) այն անձը, որին պատկանում է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը, կամ դ) այն անձը, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է:

Ո՛չ Օրենքում, ո՛չ միջազգային ստանդարտներում իրականշահառուի չափահասության վերաբերյալ պահանջներ առկա չեն: Ըստ այդմ, անչափահաս անձը եւս կարող է համարվել գործարքի կամ գործարար հարաբերության իրական շահառու, եթե համապատասխանում է Օրենքի վերոգրյալ հիմքերից որեւէ մեկին: Այնուամենայնիվ, իրական շահառուի բացահայտման համապարփակության եւ արդյունավետության տեսանկյունից կարեւոր են նաեւ օրենսդրությամբ քաղաքացու գործունակությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես,

● ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ՀՀ քաղաքացու գործունակությունը, այն է՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու եւ իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը, ամբողջ ծավալով ծագում է չափահաս տարիքից՝ 18 տարեկանից:

● Միեւնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ տասնչորս տարեկանը չլրացած անչափահասների փոխարեն գործարքները՝ բացառությամբ մանր կենցաղային, նոտարական վավերացում եւ պետական գրանցում չպահանջող, օրինական ներկայացուցչի կողմից տրամադրված միջոցները տնօրինելու գործարքների, կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները (այսուհետ՝ օրինական ներկայացուցիչներ): Հարկ է նշել, որ անգամ բացառություն կազմող դեպքերում գույքային պատասխանատվությունը միեւնույն է կրում են օրինական ներկայացուցիչները:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրական շահառուն տասնչորս տարին չլրացած անչափահաս է, բանկը պարտավոր է որպես իրական շահառու դիտել եւ Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված գործողությունները իրականացնել նաեւ նրա օրինական ներկայացուցիչների նկատմամբ:

ՀՀ կենտրոնական բանկ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հնարավո՞ր է ուսումնական հաստատությունում աշխատել ուսուցիչ՝ առանց ուսուցչի թափուր տեղի մրցույթի մասնակցության:

Սուսաննա Կիրակոսյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 15 ապրիլի 2013 թվականի N 396-Ն հրամանի՝ ուսումնական հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, եւ թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե

1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում),

2) թափուր ժամերն առաջացել են 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում,

3) թափուր տեղ առաջանալու դեպքում դասաժամերը տրամադրվում են հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, նույն հաստատությունում տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող ուսուցչին, որի ծանրաբեռնվածությունը չի գերազանցում «Հանրակրթության մասին» օրենքով, ինչպես նաեւ Աշխատանքային օրենսգրքով նախատեսված ծավալը,

4) առկա է նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածու:

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2020 թ. հոկտեմբերի 14-ի N 40-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղելու կարգի» պահանջների՝ առնվազն 1 անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չհամալրվելու դեպքում հնարավոր է աշխատել ուսուցիչ՝ գործուղվելով ՀՀ մարզերի համապատասխան դպրոցներ:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝Գագիկ Շամշյանի

33-ամյա վարորդը «Opel»-ով Իսակովի պողոտայում մխրճվել է «CPS» բենզալցակայանի մեջ՝ կոտրելով էլեկտրասյունն ու գովազդային վահանակը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 7 + 21 + 26
	Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 21 + 25
	Կոտայքի նախալեռներ	+ 11 + 13 + 25 + 27
	Գեղարքունիք	+ 3 + 8 + 18 + 22
	Լոռի	+ 5 + 9 + 20 + 24
	Տավուշ	+ 6 + 9 + 21 + 24
	Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 21 + 24
	Արագածոտնի նախալեռներ	+ 10 + 14 + 25 + 29

	Արարատ	+ 11 + 14 + 27 + 30
	Արմավիր	+ 10 + 14 + 28 + 31
	Վայոց ձորի լեռներ	+ 4 + 8 + 22 + 25
	Վայոց ձորի նախալեռներ	+ 11 + 14 + 28 + 31
	Սյունիքի լեռներ	+ 4 + 7 + 16 + 20
	Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 + 21 + 25
	Սյունիքի հովիտներ	+ 14 + 16 + 27 + 30
	Երեւան	+ 13 + 15 + 28 + 30

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.09.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*